

զանձն՝ որակելու համար զինւոյն ստեղծած այդ բարոյական ու բնախօսական աւերման վիճակը մարդուն մէջ: Արբեայք¹ եւ կամ յունական բարդութեամբ զինեհարեայք² անբաւական են անոնց համար. աւելի կծուները ձեռք կ'առնուն. զեղիսեայք³, զզիսեայք⁴, րարացեայք⁵, դանդաղեայք⁶, սխարսկեայք⁷, սխարսկանք⁸ կամ սխարսկեայք⁹. րմրեայք¹⁰ կամ րմրեայք¹¹, րրբեայք¹², զմրեայք¹³ կամ զմրեայք¹⁴. յիմարեայք¹⁵, մտակորոյսք եւ իւրացնորք¹⁶ կամ իւրայեղեայք¹⁷, ի մտաց անկեայ¹⁸, զմտօք զառանցեայ, կամ անցեայ զառանցեայ ի գիւնոյ¹⁹, զիւնոյն զակամբ կեկեայ²⁰, եւ ուրիշ անթիւ բացատրութիւններ՝ զոր կը ներշնչէ բանաւոր մարդոյն կամաւորապէս զգեցած այդ անբանական պատկերը, որ աւանդ՝ այնքան հաճելի եւ ընտանի էր մեր ազատանւոյն:

ՅՕ. — Մեկնումն: — Այդ վիճակին մատնուած կոչնականք ի՞նչպէս ուրեմն

1. Փաւս. 52. Մանգ. 129, — 2. Եսայի, ԻԳ, 20, — 3. Մանգ. 128. Ոսկ. Թղթ. Ա, 534, — 4. Ոսկ. անդ, 200, — 5. Փիւ. ճոթ. 18, — 6. Եսայի, ԻԸ, 7, — 7. Փաւս. 114. Փիւ. ճոթ. 18, — 8. Փիւ. ճոթ. 16, — 9. Եսայի, ԻԳ, 20, — 10. Մամբ. 60, — 11. Մանգ. 74. Փիւ. ճոթ. 18, — 12. Փիւ. անդ, — 13. Մամբ. 38, — 14. Փիւ. ճոթ. 18, — 15. Մանգ. 74, 128, — 16. Նոյն, 129, — 17. Նար. 517, — 18. Մանգ. 128, — 19. Փաւս. 237, — 20. Նոյն, 208: